ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՏԱՎԱԶԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

2011թ.համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը համայնքի բնակչությանը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՏԱՎԱԶ 2011թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱՐՏԱՎԱԶԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՀԱՇՎԵՏՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

07.10.2011 թ. գ.Արտավազ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2011 թվականի հոկտեմբերի 07-ին Կոտայքի մարզի Արտավազ համայնքում տեղի ունեցավ համայնքի հաշվետու համայնքային ժողովը:

Մասնակցությամբ՝
Համայնքի ավագանու անդամներ՝
1.Ա. Գրիգորյան
2.Հ. Հովհաննիսյան
3.Ա. Մելքոնյան
4.Ս. Պողոսյան

Համայնքի ղեկավարի աշխատակազմից
1. Համայնքի ղեկավարի տեղակալ՝ - Հ. Հակոբյանը
2. Գլխավոր մասնագետ-գլխավոր հաշվապահ – Ս. Չիդիլյանը
3. Առաջատար մասնագետ - Բ. Չոբանյանը

Համայնքի բնակիչներ

1. Հ. Հակոբյան
2. Գ. Առաքելյան
3. Շ. Սարգսյան
4. Ա. Չիլինգարյան

Օրակարգ

1. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հանրային իրազեկման մասին:
2. Ընթացիկ հարցեր:

Լսեցին

Ռ. Հովհաննիսյան – Համայնքի ղեկավար
Ներկայացրվեց Արտավազի բյուջեի 3-րդ եռամսյակի հաղորդման մասին: Կատարվել է հողի հարկի և գույքահարկի վարձավճարների հավաքագրում:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2010թ. դեկտեմբերի 15-ին համայնքի ավագանին իր 45 որոշմամբ ընդունել է 2011թ. բյուջեն, ըստ որի եկամուտները կազմում են 21մլն.191 հազար դրամ, ծախսերը՝ 21 մլն. 191 հազար դրամ: Հողի հարկի չափը կազմել է 6 մլն 357 հազար 300 դրամ: 2011 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ հողի հարկը հավաքագրվել է 4մլն. 414 հազար 500 դրամ, որը կազմում է տարեկան պլանի 70% -ը:
Համայնքի 25 տնտեսություններ օգտվել են հողի հարկի արտոնություններից, որոնց նախկինում կուտակված տույժ և տուգանքները զրոյացվել են:
2011թ. գույքահարկը հավաքագրվել է3 մլն. 029 հազար 400 դրամ, որը կազմում է տարեկան պլանի 73% -ը:

ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Այս ծրագրի շրջանակներում համայնքի ղեկավարը կարևորեց համայնքի ճանապարհների նորոգման աշխատանքները: Հաջորդ տարվա ընթացքում կիրականցվի միջհամայնքային ճանապարհների ասֆալտապատումը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Գյուղապետարանին օգնության խնդրանքով դիմած սոցիալապես անապահով ընտանիքների խնդրանքը բավարարվել է՝ հատկացվել է անապահով ընտանիքներին ֆինանսական օգնություն 495 հազ. դրամի չափով:

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքում գործում է 9 առտրի օբյեկտներ: Հսկողություն է իրականացվում համայնքի առևտրի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների նկատմամբ: Տրվել են ծխախոտի և ոգելից խմիչքի վաճառքի և իրացման թույլտվություններ, որոնցից գանձվել են համապատասխան տեղական տուրքի գումարներ:

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2011թ.կայացել է Արտավազ համայնքի սեփականություն հանդիսացող հողատեսքերի աճուրդ - վաճառք, որոնց արդյունքում օտարվել են գյուղ. նշանակության հողատեսքեր – 1047,39հա, 5.0 հա բնակելի կառուցապատման, արտադրական նշանակության – 10,35հա: Աճուրդների արդյունքում համայնքի բյուջե է մուտքագրվել մլն հազար դրամ: